ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ (*«Թուրքիային մշտապես հետապնդում է հայերի ցեղասպանությունը»*)

Հանրահայտ թուրք սոցիոլոգ, պատմաբան, հասարակական գործիչ:

Հեղինակ «Երկխոսություն միջազգային ջրբաժանի վրայով. ակնարկներ հայ թուրքական երկխոսության մասին» աշխատության (Զորյան ինստիտուտ, Կանադա, Տորոնտո, 2001թ.), «Հայկական հարցը և մարդու իրավունքները պատմության մեջ» (Անկարա, 1999թ.) և Հայոց ցեղասպանությանը, հայ-թուրքական հարաբերություններին նվիրված այլ բազմաթիվ հրապարակումների:

ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ (*«Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում»*).

Հեղինակի մասին տե՛ս հանդեսի նախորդ (թիվ 9) համարում:

ԼԵՎՈՆ ՂԱԶԱՐՅԱՆ (*«Геноцид как ужас и закон эпохи прав человека»*)

ԵՊՀ Տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է աշխարհաքաղաքականության և ձեռներեցության տեսության հետ կապված խնդիրները:

Այդ ուղղությամբ ունի մի շարք հրապարակումներ ակադեմիական հանդեսներում:

ՆՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ (*«Ցեղասպանությունը և միջազգային իրավունքը»*)

ԵՊՀ հայագիտական կենտրոնում «Ցեղասպանության հանցագործությունը» գիտական թեմայի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետազոտությունների շրջանակը ներառում է սփյուռքահայերի Մեծ հայրենադարձությունը, Սփյուռքի պատմությունը, Հայկական և ցեղասպանության հիմնահարցերը: Մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովներին: Տպագրել է նշված հիմնահարցերին վերաբերող մի շարք գիտական հոդվածներ:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆ (*«Օսմանյան կայսրությունում ցեղասպանության քաղաքականության ակունքների հարցի շուրջ. հակազդեցություն 1876թ. բուլղարական ապստամբությանը»*)

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է հայ-թուրքական հարաբերությունները, Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը:

Մի շարք մենագրությունների և գիտական աշխատությունների հեղինակ է: Խնդրո հարցի շուրջ զեկուցումներով հանդես է եկել տարբեր հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ (*«Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահների ուղերձներն ու հայտարարությունները Հայոց ցեղասպանության տարելիցների կապակցությամբ (1976-2003թթ.)»*)

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրները, մասնավորապես՝ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման գործընթացը, ճանաչմանը խոչընդոտող և նպաստող գործոնները, այս գործ-

ընթացը ներկայացնող փաստաթղթերը և այլն:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը ԱՄՆ-ում (1965-2003թթ.)»:

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ (*«Արաբական աշխարհի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և Մեքքայի շերիֆ և էմիր Ալ Հուսեյն իբն Ալիի ուղերձները»*)

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է Հայոց Մեծ եղեռնի ուսումնասիրությունն արաբական պատմագրության մեջ:

Խնդրո առարկա հարցի շուրջ զեկուցումներով հանդես է եկել գիտական տարբեր կոնֆերանսներին:

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ (*«Աղձնիքի բնակչության էթնիկ կազմը XIX-XXդդ.»*)

Պատմական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է հիմնականում հայ ազգագրության հիմնահարցերը: Հեղինակն է «Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը» (Երևան, 2004 թ.) աշխատության և այդ ու այլ թեմաներով շուրջ երեք տասնյակ հոդվածների ու ուսումնամեթոդական ծրագրերի: Զեկուցումներով հանդես է եկել տարբեր հանրապետական գիտաժողովներում:

ՍԹԻՎԵՆ Լ. ՋԵԿՈԲՍ (*«Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը»*)

Ալաբամայի համալսարանի (Տուսկալուզա) կրոնագիտության բաժնի դասախոս:

Զբաղվում է հոտդայականության հարցերով:

ՍԱՐԻԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (*«Մոսկվայի հայկական կոմիտեի որբախնամ գործունեությունը (1915-1920թթ.)»*)

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակը Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-20թթ.) ցեղասպանությունից հետևանքով որբացած երեխաների խնամքով զբաղվող հայ և օտար կազմակերպությունների, ընկերությունների գործունեությանն առնչվող հարցերն են:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Ցեղասպանությունից որբ մնացած հայ երեխաների խնամքը Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-1920թթ.)»: